Արձանագրություն 4
«ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.09.2019թ. ժամը 11:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գ.Գաբրիելյան – «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ (ԳՊ/ԳԱՊ)
Անդամներ
Ա. Առաքելյան- «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի հաշվապահ (ԳՊ/ԳԱ)
Ա. Հակոբյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի վարորդ (ԳՊ/ԳԱ)
Մ.Խլղաթյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի համակարգչային օպերատոր (ԳՊ/ԲԱ)

Բացակայում էր Ս. Մկրտչյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի լաբորանտ (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար-գնումների համակարգող

Գ.Ամիրջանյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Գաբրիելյան)

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման գործընթացում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում են իրականությանը համապատասխանող: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացրած եզրակացության «Տիգրան Շին Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 3025 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ, որը համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի կազմում է մասնակցի գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը (0.086 %):

Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Տիգրան Շին Գրուպ» ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ – 0

2. Հաստատել «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2» գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Գ. Գաբրիելյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԾ-ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Տիգրան Շին Գրուպ» ՍՊԸ-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Գաբրիելյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը, տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝ ընտրված մասնակցին անգործության ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Գաբրիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Առաքելյան

_____ Ա. Հակոբյան

_____ Մ. Խլղաթյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան